

Կացին ախպեր



Exported from Wikisource on 08/05/20

Կացին ախպեր

←

[Ճամփորդները](#)

[Խոսող](#)

[ձուկը](#)

→

[Հովհաննես](#)

[Թումանյան](#)

[184]

ԿԱՅԻՆ ԱԽՊԵՐ

Մի մարդ գնաց հեռու երկիր
աշխատանք անելու: Ընկավ մի գյուղ:
Տեսավ այս գյուղի մարդիկ ձեռով են
փայտ կոտրատում:

- Ախպե՛ր,- ասավ,- ինչո՞ւ եք ձեռով
փայտ անում, մի՞թե կացին չունեք:

- Կացինն ի՞նչ բան է,- հարցրեցին
գյուղացիք:

Մարդը իր կացինը գոտկից հանեց,
փայտը ջարդեց, մանրեց, դարսեց մյուս
կողմը: Գյուղացիք այս որ տեսան,
վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար .

- Տո՛, եկե՛ք, տեսե՛ք կացին ախպերը
ինչ արավ:

Գյուղացիք հավաքվեցին կացնի
տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին,
շատ ապրանք տվին ու կացինը ձեռքիցն
ատան:

Կացինն ատան, որ հերթով կոտորեն
իրանց փայտը:

Առաջին օրը տանուտերը տարավ:
Կացինը վրա բերավ թե չէ՝ ոտը կտրեց:
Գոռալով ընկավ գյուղամեջ:

- Տո՛, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը
կատաղել է, ոտս կծեց:

Գյուղացիք եկան, հավաքվեցին,
փայտերն առան, սկսեցին կացնին
ծեծել: Ծեծեցին, տեսան՝ բան չդատավ,
փայտերը կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացավ, չորս կողմը
բռնեց: Երբ կրակն իջավ, եկան բաց
արին, տեսան՝ կացինը կարմրել է:

- Վա՛յ, տղե՛ք, կացին ախպերը
բարկացել է, տեսե՛ք՝ ոնց է կարմրել,
որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք
կրե՛ք: Ի՞նչ անենք: Մտածեցին,
մտածեցին ու վճռեցին՝ տանեն բանտը
զցեն:

Տարան զցեցին տանուտերի
մարագը: Մարագը լիքը դարման էր.
զցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը
երկինքը բարձրացավ:

Գյուղացիք սարսափած վազեցին
տիրոջ ետևից. «Ե՛կ, աստծու սիրուն,
կացին ախպորը բա՛ն հասկացրու»:

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0/)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- Վազգեն
- 24.59.115.230
- Alexander Fischer
- 204.52.215.21
- Teak
- 128.6.83.46
- GeoO

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0/](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0/)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)